ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ապրիլի 2025 թվականի N 45-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՆՏԱՌՏՆԿՄԱՆ ԵՎ ԱՆՏԱՌՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքով», հիմք ընդունելով ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության Հայաստանյան գրասենյակի նախաձեռնությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հավանություն տալ՝ շրջակա միջավայրի պահպանման, էկոհամակարգերի վերականգնման և կլիմայական փոփոխությունների մեղմման նպատակով «Հայաստանում անտառների դիմակայության բարձրացում՝ մեղմացման միջոցառումների շնորհիվ հարմարեցման և գյուղական վայրերում կանաչ տարածությունների ընդլայնման միջոցով» ծրագրի շրջանակներում 2025-2026 թթ. Գորիս համայնքի համայնքապատկան հողատարածքներում անտառտնկման և անտառվերականգնման աշխատանքներին:
2. Անտառտնկման և անտառվերականգնման աշխատանքներն իրականացնել հետևյալ տարածքներում.
   1) Գորիս քաղաքի վարչական տարածքում գտնվող /կադաստրային ծածկագիր՝ 09-003-0020-0001-ից/ 15 հա,
   2) Գորիս քաղաքի վարչական տարածքում գտնվող /կադաստրային ծածկագիր՝ 09-003-0337-0001-ից/ 20 հա,
   3) Ակներ բնակավայրի վարչական տարածքում գտնվող /կադաստրային ծածկագիր՝ 09-024-0203-0001-ից/ 7,5 հա,
3. Համայնքի ղեկավարին՝ համակարգել աշխատանքները ծրագրի պատասխանատու կողմերի հետ, աջակցություն ցուցաբերել ծրագրի իրականացմանը, այդ թվում՝ հողերի նպատակային օգտագործման փոփոխության, ծրագրային ու տեխնիկական աջակցության տրամադրման և անհրաժեշտ ընթացակարգերի կազմակերպման հարցերում:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌՈՒՇԱՆՅԱՆ ԱՌՈՒՇ
ԱՂԱՋԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ
ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՄՀԵՐ
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԼԵՎՈՆ

ԻՎԱՆՅԱՆ ՀԱՅԿ
ԼԱՋԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ
ՄԿՐՏՉՅԱՆ ՍՈՆԱ
ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՀՐԱՄ
ՍՈՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՏՈՌՈՋՅԱՆ ԱՐՏԱԿ
ՏՈՌՈՋՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ**

2025թ. ապրիլի 17
ք. Գորիս